



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 35

ՇՎԱՐԱԹ

28 ԱՊՐԻԼ 1907

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՍԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՍՀԱՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԸ	Տարեկան 54 ՂԸ	Տարեկան 42 Ֆր.
Վեցամսեայ 25 ,	Վեցամսեայ 27 ,	Վեցամսեայ 6 ,

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելագէտ խնամուած միակ զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բաժնուհիներէն համար՝ որ իր յատկանիշն է .

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ 1900.

ԱՐՏԱԲՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼԱՆ 1901

Հանդերձ Ժիւռիի անդամակցութիւնը

Թուրքիոյ և բովանդակ Արեւելիքի համար

Գ. ՍԱՐԳԻՍՐ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցն

Կ. Պոլիս, Պաղչե-գարու, Օռոգսի-Պալ

ԱՐՏՈՆԱՏԻՐ -

الى جاده سنده نومي

ՏՊԱԳՐՈՒԹ.

Կ. Պոլիս, Պաղչե-

Հատոր 4



Ձեռքի, ոտի ու ոտքի եւ ձեռքի,
էփանգամայն մեքենաներ
էկը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅՈ. ՊԱԼԱՏԱԵ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լագործութեամբ,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բոլանդակ աշխարհի

Մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց յէջ:

ՀԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|--------|--|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամլէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամլէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻՏԱՐ | Չարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձեռնողեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերս, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզդուլուի տունը:

ապրիլի 1922

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅՈ. ՊԱԼԱՏԱԵ
Սինկերի մեքենաները
կը ծախսին մի միայն
Սինկեր Ընկերութեան
վաճառատանց յէջ:
ՀԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ
ԲԵՐՍ. (1. Մեծ փողոց,
Պօն Մարշէի դէմ,
թիւ 343 եւ 343
կրկին .
(2. Մեծ փողոց,
Կալաթա Սէրայի
Լիսէին դէմ.
ԿԱԼԱԹԱ (1. Սինկեր
խան, թիւնէլի
ետեւը.
(2. Գարաքէօյ,
Թրամլէյի կայարանին
դէմ.
ՊՈԼԻՍ (1. Սուլթան
համամ .
(2. Սուլթան Պէյազիտ,
Թրամլէյի կայարանին
դէմ, թիւ 13 .
ՍԵԻՏԱՐ Չարչը Պօյու,
թիւ 120 .



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՆԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 35

ՇԱՐԱԹ

28 ԱՊՐԷԼ 1907

ՕՐՈՒԱՆ ԹԵՐԹԵՐԸ

(Ա.)

Եթէ հացը մարմնոյն սնունդը կը դա-
ւանինք, լաւ cuisiner եղած օրաթերթ
մ'ալ մտքին անհրաժեշտ պէտքը հարկ
է ընդունիլ :

Օրաթերթն է որ մեզ կը տեղեկա-
ցընէ՝ ինչ որ կ'անցնի կը դառնայ, լը-
լայ գրական, լըլայ իմացական, ա-
ռեւարական, գիտական, քաղաքական,
գեղարուեստական և դեռ շարք մը գի-
տելիքներ, որոնք ամփոփուելով թեր-
թի մը չորս ստուար էջերուն մէջ, զմեզ
կը լուսաբանեն, կ'ուսուցանեն մեզ ինչ
որ չենք գիտեր, մտաւոր հաղորդակ-
ցութեան մը մէջ գնելով հեռաւոր աշ-
խարհները, գիտական նորոյթներու
տեղեկ ընելով ամէնքը, և որ աւելին
է ընթերցման ճաշակը ու փափաքը
ներշնչելով ժողովրդին :

Չկայ պաշտօն մը այնքան չինիչ և
օգտակար՝ որչափ օրագրութիւնը։ Շնոր-
հիւ մեր կրթասէր և յառաջդիմասէր
Օգոստափառ Վ. հապետին, այսօր ու-
նինք ի ձեռին օրաթերթերու և չաբա-
թաթերթերու բաւական թիւ մը, ու-
րոնք օրը օրին մեր մտաւոր հորիզոնը
կընդլայնեն՝ զմեզ տեղեկացնելով այն
օգտակար գիտելիքներուն, որոնց վը-
րայ գաղափար իսկ չպիտի ունենայինք,
գիտական և իմացական կոյրեր պիտի
դառնայինք, խոպան ու կոպիտ պիտի
մնար մեր միտքը։ Օրագիրը իմացա-
կան փարոսն է, անոր վառ լոյսին շնոր-
հիւ կը տեսնենք ու կը տեղեկանանք
մեր աշխարհին չորս անկիւններուն մէջ
անցածն ու դարձածը։

Արդ՝ հիմա որ երկու տողի մէջ բա-

ցատրեւ ջանացինք օրագրին կարեւորութիւնը, ընտրութիւն մը պէտք է՝ թէ ո՛ր թերթը պէտք է ստանալ մեր մեծ պակասին զոհացում տալու համար:

Քիչ ատեն է որ Արեւելի փոխելով իր նախկին վարչութիւնն ու խմբագրութիւնը, կը հրատարակուի չորսահազին էջերէ բաղկացած *formel* մը, զոր կը վարէ խմբագրական համբաւ ու փորձառութիւն ունեցող տիպար անձնաւորութիւն մը, իրեն օժանդակ առած ոչ նուազ գործի մարդիք, որոնք բարենախանձ ոգւով՝ և ոգի ի բռին աշխատելով, այսօր թերթը հասցուցած են այն աստիճանին՝ որուն կատարեալ կրնայ ըսուիլ, առանց այլ և այլի:

Արեւելի առաջին էջը որ յատկացուած է գրական, գիտական և իմաստասիրական ընտրեալ նիւթերու շարքին, ամէն օր նոր և *attirant* չեմ գիտեր ինչ մը ունի, որ ընթերցողը կստիպէ շարունակ ունենալ ի ձեռին, միշտ տարբեր համ ու հոտ քաղելու համար անկէ:

Երկրորդ էջը ուր ընդհանրապէս կերեւին Եւրոպական է՛ն լուրջ ու կարեւոր թերթերէ քաղուածքներ, իրենց լուրերու կարեւորութեամբ և անոնց վարժ թարգմանութեան շնորհիւ պէտք է ըսել թէ առաջին տեղը կը գրաւէ օրուան լրագրութեան մէջ:

Գալով երրորդ էջին, ներքին լուրերու և Եկեղեցական քրոնիկներու մանաման է պիտի ըսեմ՝ եթէ չափազանցութիւն չըլլայ, այնքան օրը օրին լուրեր են՝ որոնք կը զարդարեն այդ ստուար սիւնակները, լուրեր՝ որոնք իրենց կարեւորագոյն և օգտակար հանգամանքով ընթերցողին հետաքրքրու-

թիւնը միշտ վառ պահելու առաւելութիւնն ունին:

Այս բոլոր շահեկան առաւելութիւններով օժտուած այս տիպար օրաթերթին՝ Արեւելի մէջ գրիչ չեն կըրնար սրել ամէն անոնք, որոնք անուն մը, համբաւ մը չունին գրական հրապարակին վրայ: Ամէն յօդուածագիր՝ մասնագէտ մըն է, և ամէն աշխատակից՝ կարող գրագէտ մը:

Ու չէք զարմանար երբ այս անըստգիւտ ամբողջութիւնը կստանաք փոխան ՏԱՍԸ ՓԱՐԱՅԻ Ճոխութեան հետ՝ աժանութիւն, աժանութեան հետ՝ օգտակարութիւն, և օգտակարութեան հետ՝ արժանիք, ահա ամբողջութիւնը Արեւելի Օրաթերթին, որ ձեռքէ ձեռք կը խլուի այսօր Մայրաքաղաքիս մէջ և թէ Գաւառները:

Անկողմնակալութեամբ ուղեցինք ճանչցնել մեր Մեծայարգ Պաշտօնակիցը իր տիպար թերթով, յարգելով մեր սկզբունքը որ է ԱՆԱՉԱՌՈՒԹԻՒՆ: Մեր փափաքն է՝ տեսնել մեր բոլոր Պաշտօնակիցները փառաց լէնիթը, նամանաւանդ ամէն անոնք՝ որոնք պաշտօնակցի հաշուական ստոր նկատումներ չեն սնուցաներ մեզ դէմ, և ուրիշին յաջողութիւնը փուշ չըլլար իրենց աչքին: Արեւելի առաջին օրէն սնոյց աղնիւ զգացումի իր ընթացքին մէջ հանդէպ Հանրագիտակի, իր կրկնակ խմբագրականներովը, ու մենք ալ մեր կարգին՝ պարտ անձին կը սեպենք իր գովեստը ընել, ոչ թէ փոխարինութիւն՝ այլ իբր անկեղծ և բարեացակամ պաշտօնակից, ճշմարտութիւնը ճանչցնելու համար ընթերցող հասարակութեան:

Ահա անկողմնակալ հանդէսի մը առ Մեծայարգ Պաշտօնակիցը ունենալիք պարտականութիւնը, որուն մէջ թերեւս թերի մնայ՝

Վ. ՓԱՓԱՉԵԱՆ

Մ Ա Հ

Ե Ի

ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՎՍԵՄ. ՍԱՐԳԻՍ ԷՖԵՆՏԻ ԹԱՃՃԵԱՆԻ

Ներկուսաբի, մինչ Քրիստոնեայ աշխարհը Ս. Զատիկը կը տօնէր ուրախ գոլարք, Սեղա-
նաւոր դասակարգն ալ կողբար իր մեծ կորուստը, յանձին՝ Վսեմ. Սարգիս Էֆ. Թաճեանի:

Հանգուցելոյն բարեմասնութիւնները մի առ մի բուելէ աւելի Անոր օրինակելի կեանքը
աչի առջեւ բերել, Անոր բարեբար ոգին ի վեր հանել եւ իր աղփասասիրութեանը հարիւ-
րաւոր օրինակներով գոհանալ պէտք է: Սարգիս Էֆ. Թաճեան մին եր այն դէմքերէն՝ որոնք
իրենց ազնիւ բնոյթով, օրինակելի կենցաղով, բնական կամ գոլագոլոս կենսակցութեամբ, եւ
աղփասին հանդէպ ցոյց տուած բարեացակամ ոգով յիշատակելի օրինակ մը կը ձգեն իրենց
ետին, որպիսի եր ինքը:

Այսօր սեղանաւորական դասը շատ բան կը պարտի հանդէպ իր Արհեստագետին, որուն
խելացի եւ գործոն ուղղութեամբ շատեր օգտուած են, շատեր անունի եւ դիրքի տէր եղած՝
այսօր կ'օրհնեն ու կողբան իր կորուստը:

* * *

Երեքշաբթի ժամը 3¹/₂ ին բերա Ս. Երրորդութիւնն եկեղեցին տեղի ունեցաւ յաւար-
կաւորութեան տխուր հանդէսը, Նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, իր շուրջը
ուսնեակով Տ. Տ. Երէցեան, Մկրտիչ Վեհապետեան Արք. Եպիսկոպոսները, Տ. Տ. Հմայեակ
և Աշոտ Եպիսկոպոսները, ինչպէս նաեւ ութը Վարդապետներ, քսանէ աւելի Քահանաներ
և բազմաթիւ դպիրներ:

Մեռելական արարողութիւններէն վերջ՝ Նորին Սրբազնութիւնը բեմ ելլալով, Հանգու-
ցելոյն արժանի դրուատիքը ըրաւ, վեր առնելով անոր բարի յատկութիւնները, գործունէ-
ութիւնը և ընտանիքին հանդէպ տածած սէրը ու գոլագոլութեանը:

Դամբանականէն վերջ, դադարը՝ որուն ծոպերը և կերոնները կը կրէին ականաւոր անձ-
նաւորութիւններ, առաջնորդուեցաւ եկեղեցւոյն բակը, ուր ցաւակցութիւններ յայտնուեցան
ղաւկին՝ Օննիկ պէյ Թաշճեանի, Վսեմ. Սերվիշէն Էֆէնտիի և եղբօրը Միսաք Էֆ. Թաշճե-
անի, և անտի նոյն հանդիսաւորութեամբ մեռելակիր կառքով մը փոխադրուեցաւ Գապա-
թաշ, և անտի մամաւոր շողեակով մարմինը տարուեցաւ Գնալը, տեղւոյն եկեղեցւոյն
բակը ամփոփուելու համար:

Շողեակաւ Գնալը մօտենալուն՝ Յոյն և Հայ եկեղեցւոյ զանգակները կը հնչէին ու դը-
պիրներ զգեստաւորուած ընդ առաջ եկած էին, մահասարսուռ երգեցողութիւններով, ուրկէ
կրկին մեծաշուք Թափորով և Նախագահութեամբ Տ. Երէցեան Արք. Եպիսկոպոսին դադարը
առաջնորդուեցաւ եկեղեցի, ու յետ մեռելական վերջին արարողութեանց, մարմինը ըստ
փափաքանաց Հանգուցելոյն ամփոփուեցաւ իրեն յատուկ շիրմին մէջ:

Խմբագրութիւնս խորապէս զգածուած այս դառն ու անմխիթար կորուստին առթիւ,
երկնային մխիթարութիւն կը հայցէ՝ այրի Տիկին Վերժինի, Ղաւկին՝ Օննիկ պէյի, Վսեմ.
Սերվիշէն Էֆէնտիի, Միսաք Էֆէնտիի և համայն Թաշճեան գերդաստանին և պարագանե-
րուն:

Ողբացեալ Մեծանուն Ուսուցչապետին՝ Ռ. Յ. Պետրեանի մահուան առթիւ, վարժարանին 1907ի շրջանաւարտներէն՝ Պր. Արմենակ Յ. Գարանձիլեան, հետեւեալ յուզիչ տղերը դրկած է մեզ՝ հրատարակութեան խնդրանքով ։

ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Մեռա՛ւ Պէրպէրեան ...

Մեռա՛ւ մեր բարոյական հայրը ... Դեռ իր վերջին օրերուն հակառակ բարեկամ բըժիշկներու պատուէրին՝ չդադրեցաւ դասախօսելէ մեզ, մեզ՝ որ այսքան տարիներէ ի վեր անհուն եռանդով մը կո՛ւնկնդրէինք մեր ողբացեալ դաստիարակը ։

Մեր վերջին հոգեբանութեան դասին, անգուսպ եռանդով մը անոր դալստեան կըստ պատէինք, վասն զի գեղեցկին վրայ պիտի ճառէր. գեղեցկին վրայ՝ որ ամէն ժամ ամէն վայրկեան անպակաս է մեր աչաց առջեւէն, Սանդուխտի գլխէն իր ոտնաձայնը՝ առինք, տղաքը ուրախութեամբ « Էֆէնտին կուգայ կոր » կը շնչէին, կը մտնէ Էֆէնտին արագ քայլերով, ամէնքս ալ կանգուն յարգանքի բարեւը տուինք իրեն. գլխու խոնարհութեամբ մը, սկսաւ իր վճիտ շեշտերով, յատակ պարբերութիւններով խօսիլ ... և ապա կարգաց իր հեղինակութիւններէն գեղեցկին վրայ գրուած, այնքան յուզիչ, այնքան զգայուն՝ որ ամէն վիշտ ու ցաւ մոռցած բերանաբաց մտիկ կընէինք, բայց Պէրպէրեան Էֆէնտի մերթ ընդ մերթ կընդհատէր ընդերցանութիւնը իր չոր հազերու « Էօհէօ » ներու պատճառաւ, այլ հակառակ ամէն ասոնց՝ երբէք չ'դադրեցաւ դասախօսելէ, միշտ կը խօսէր լեցուն պարբերութիւններով, որոնք կը յորդէին իրարու հետեւէ, առանց երբէք վարանութեան նշան մը ցոյց տալու ։ Զուր խնդրեց, շուրջ բերինք, խմեց ... սակայն անպիտան հաղերը չէին դադրեր բնաւ ու կը սառապեցնէին մեր ողբացեալ հայրը ու մեզ ։

Պահ մը ակամայ ուղեցինք դադրեցնել տալ՝ դասախօսութիւնը, որպէս զի աւելի չտկարանայ, բայց նա միշտ կը խօսէր՝ առանց կարեւորութիւն տալու ասոնց. ժամը լմնցաւ Պէրպէրեան Էֆէնտի հանգստանալ գնաց,

հետեւեալ օրը կրկին դասախօսութեան իջաւ մեր « երէց » ընկերներուն, բայց այս անգամ հազը աւելցած էր, աչքերը իրենց ժայլունութիւնը կորսնցուցած էին ։

Ասիկա իր վերջին դասախօսութիւնը եղաւ վարժարանին մէջ, զորս վերջացուց նշանաւոր մարդոց՝ Բեաթիպեանի վրայ գրած մէկ յուզիչ դամբանականովը, որ իր աջ ձեռքի թիթեւ ճօճումներով, իր ջինջ ու յուզիչ շեշտերով արտասուել տուաւ իր աշակերտները, որոնք բոլորովին յուզուած իրենց աչերը սրբեցին ... ո՛հ, ի՛նչ օր ... ի՛նչ ժամ ... ի՛նչ արտասուք նախազգացուած ։

Ո՛վ խեղճ հայրիկ ... Գիտէի՞ր, գուշակեցի՞ր արդեօք թէ հետեւեալ օրը մահուան դալուկը պիտի կնքուի քու լայն ճակարդ վրայ և քու հին ու նոր շրջանաւարտներդ ու սաներդ պիտի գան վերջին համարը դըրօշմեր անոր, որուն ներքեւ Պղատօներ, Սոկրատներ, Արիստոտելներ, Վիթթօր Հիւկօներ, Լամաութիւններ ապրած, և դամբանականներ պիտի կարդան դազաղիղ վերեւ ։

Աւա՛ղ, չկա՛յ ալ Պէրպէրեան, չկա՛յ ալ մեր բարոյական հայրը, չկա՛ն այլ եւս իւր հայրական իրատները, չկա՛յ այլ եւս իւր ճառագայթող դէմքը, իր յիշատակը միայն պիտի մնայ յաւէտ մեր սրտերուն խորը, հոն պիտի փորագրենք նորա անունը, հոն՝ ուր արդէն իսկ մեծ տեղ մը գրաւած է ։

Հանգիստ ննջէ ո՛վ մեր սրտին հայրիկը, վասն զի բոլորովին որք չթողուցիր, Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը մեզ իր հովանաւորութեան ներքեւ առած՝ Բու պակասը կը լեցնէ ։

Երանելի հանգիստ Բեզի ո՛վ աննման դաստիարակ, ա՛լ Բու բաժինդ պիտի ըլլայ՝ երկնային յաւիտեաններու հանգիստի բեմէդ հովուել մեզ և զմայլիլ, մինչեւ որ մենք ալ, Բու մատնանշած լուսահեղեղ պողոտայիդ շրջանն ընելով գանք միանալ Բեզի առյաւէտ ։

Ուսանող

Պետրեան վարժարանի

ՍՏՄԵՆԱԿ Յ. ԳՍՐԱՆՁԻԼԵԱՆ



ԱՌԱՋԻՆ ՔՈՒԷՍ

ՎԱՍՆ ԹԱՂԱԳԱՆԻ

Վաղը տալը տարի պիտի ըլլայ որ կեանքիս մէջ առաջին անգամն ըլլալով ես ալ քուէ տուի:

Եւ ասիկայ այնքան հաճոյք պատճառեց ինձի՝ որքան հաճոյք կը պատճառէ դեռատի աղջկան մը... առաջին երկայն շրջադեպտը:

«Կրնամ ք' արել» ու և «կրնամ ամուսնանալ» ու գաղափարին գիտակցութիւնը սովորական հրճուանքներու կարգին չի պատկանիր, դուք ալ կրնաք խոստովանիլ:

Քուէթուղթիս եօթը թուանշաններուն քով անուններ դրած պահուս, վրաս այնպիսի հպարտութիւն մը եկաւ՝ որուն նմանը — դեռ այս օրուան պէս միտքս է — առաջին անգամն ըլլալով զգացած եմ երբ ծիւղու իրաւունքը ինքզինքիս տալու համար սկսած եմ շրթներուս մօտեցուցի մեր դպրոցին այնպիսի մէկ անկիւնը ուր տիրող հոտը ապահովապէս Բօ տէքստիսը չէր:

Այն օրէն մինչեւ այսօր ես զիս բթամատ մը մեծցած կը գտնեմ:

Ընտրողական ժողովոյ ղրկած քուէթուղթով մինակ ընտրելու իրաւունք մը չէր որ կը տրուէր ինձի. հապա «պատուոյ քաղաքացիութեան» ստաւելութիւնը որ շատ flatter կընէ դիս:

Եւ ըսել թէ մինչեւ այն ատեն կը կարծէի թէ մարդուս ձայն տալու համար մէյ մը բռնութիւնը կար մէյ մըն ալ... Ժեռօտէի բասթիօնները: Ընտրողական ժողովները երբեք մտքէս չէին անցած:

Բայց եթէ կարելի ըլլար այդ ժողովին ազնուաշուք անդամներուն ինձի փոխանակ ընտրողի ձայն մը տալու, չըսեմ թէնօրի մը՝ բայց սանկ պզտիկ պարթիթօնի ձայն մը տալ, հաւատացէք որ հաշար անգամ աւելի երախտապարտ պիտի մնայի իրենց:

Այն ձայնով զոր ինձ տալու հաճեցան, շատ շատ եօթը էրիկ մարդու ծառայութիւն կրնայի պատճառել, մինչդեռ եթէ իմ ուղած ձայնս ինձ արուիկ կարելի ըլլար՝ թերեւս եօթէն շատ աւելի անձերու կրնայի հաճոյք պատճառել. և այդ թւոյն մէջ քնականաբար պիտի գտնուէին պատկանողները այն սեւին՝ որ տկար ըլլալուն համար նուազ գեղեցիկը չէ:

Կը տեսնէք թէ դրած տարբերութիւնս ուշադրութեան չառնուելու հանգամանքը չունի:

«Եւ եղեւ... կիրակի»:

Առտուն շատ կանուխ արթնցայ: Պարտականութիւն մը ունէի կատարելիք:

Ես այդ օրը զգացի թէ ինչ տարբերութիւն կայ պարտականութեան մը և պարտքի մը միջև:

Երբ պարտականութիւն մը ունիմ կատարելիք, կը փափաքիմ որ շուտ առտու ըլլայ. իսկ երբ պարտք մը ունիմ վճարելիք, կը սպասեմ որ գիշերները քսանըջորս ժամ տեւեն: Եթէ միւրթարութիւն մը ունիմ, այն ալ սա է թէ, այսպէս մտածողներուն մէջ ոչ առաջինն եմ և ոչ ալ վերջինը:

Շատ չի մտածեցի քուէթուղթիս առջև: Օ՛հ, եօթը բարեկամ էն յետի մարդն ալ ունի: Եւ անոնց անունները այբուբենի կարգով տակէ տակ գրեցի: Պիտի ընտրուին, չպիտի ընտրուին: Այնքան ալ թու իրենք մտածեն: Եւ ամենաբարի bourgeoisի մը պէս, ես անձամբ գացի այդ պարտիկ տուփին մէջ նետելու համար ամբողջ խղճմտանքիս և բոլոր դատողութեանս արդիւնքը թղթի կտորի մը մէջ փաթեցուցի:

Եւ քուէհամարը կսկսի: «Եան»ներու ջրհեղեղ մը, թաղական խորհրդարանին մէջ ուր մարդս տարին անգամ մը կը խլղուի... իւղագինի օրը: Երկու ժամէ ի վեր անուններ կարդալու վրայ եմ. յանկա՛րձ... Յարութիւն Ալփիար: Մէկ օրուան մէջ երկու յուզում. երկու ժամուան մէջ թէ՛ ընտրողի և թէ՛ ընտրեալի իրաւունք: Ան ես ըլլալու չեմ, Հաւատալ չի դար: Բայց վերջապէս կոյր ալ չեմ, աւասիկ թղթին վրայ գրուած է:

Եւ կրսին թէ բաղդը մարդուս քնացած տանը կուգայ. բայց ես վեց ժամէ ի վեր արթուն եմ. աս ինչպէս կըլլայ:

Քուէհամարը կը չարունակէ. տմբողջ աւանջ կտրած եմ. բայց աւաղ, անունս միւնակ մէկ անգամ պիտի իմանամ եղեր:

Մի կարծէք սակայն թէ անպատճառ թաղական ըլլալ կուգեմ. ատ մաքէս անգամ անցած չէ, որովհետեւ ես թաղականութեան հետ այնպէս կը համաձայնիմ ինչպէս կը համաձայնէին ջինացիները ճարտնցիներու հետ... Սիմոնովի Դաշնագրութեանէն առաջ: Բայց սրվոր կը դարմանամ թէ ինչպէս կըլլայ որ ես եօթը բարեկամի անունը կը դրեմ և այդ եօթը բարեկամներուս գոնէ կէսը զիս մտքէ անցուցած չէ:

Իրաւունք ունին եղեր երբ կըսեն թէ երախտագիտութիւնը աշխարհքէս վերցուած է:

Գ. ԱԼՓԻՍԻ

Ք Ր Ո Ն Ի Կ

Զազաի վերելումը. — Հակախոսական հարցը. — Օրուան գրականությունը. — Թաղականի փառաբանություն. — Պարսպ ժամերու մեջ գրադիլ չենք գիտեր. — Գրուածք պէտք է ոչ քե գրողը :

Ճանչնալու պատիւը չունիմ թէեւ, սակայն պէտք է ըսեմ որ Զազա մին է այն անաչառ գրիչներէն, որոնք նշմարիտք ամէն բանէ վեր կը բռնեն : Զազա իբր ապաստան լաւ ընտրութիւն մը ըրած էր յարելով Հանրագիտակին, ատեն մը գոնէ զերծ մնալու համար անհարկի դատաւիտութիւններէ, որ առանց բացառութեան ամէն գրողի ճակատագրականօրէն վարձատրութիւնքն են մեր համայնքին համար, քանի որ դեռ չատ յիշ են մեր մէջ զարգացած անձեր, որոնք կարենան արժանիք մը անաչառ կերպով գնահատել : Շիտակը կը չնորհաւորեմ Ազնուուհի յօդուածագրուհին իր այդ ձեռնարկին համար, որ իր օրագրովը մեր մէջ ընդունուած կարգ մը գոեհիկ սովորութիւնները քողազերծ կընէ, օր առաջ բարոյականի սատարելու բանամտութիւնով :

* * *

Հակալքուական յօդուածներուն բուն պայքարը ատեն մը նոյն իսկ անձնականութեան դոյն ստանալէ վերջ՝ հիմա լուծեան դատապարտուեցաւ, (այլով խնկարկունները ուղածնուն պէս թող ծնկեն ուրեմն) առանց որոշ վերջաւորութեան մը կարենալ յանգելու, քանի որ մեր մէջ մոլութիւնները քաջալերողները թուով քիչ չեն : Միայն ցաւալի կէտը հոն է որ ապագայ պատանեկութիւնը այդպէսով իսպառ գինեմուծութենէ սոսկացնել ու հեռու պահել էր յարգելի Թավշանճընանին նպատակը, զոր չուզեցին լիովին ըմբռնել ու ըստ հաճոյս քաջալերել զինքը աս ու ան, անտեղի առաջարկներով, նոյն իսկ հեզնական գոյն մը տալով իրենց գրուածքին :

Ըսելիք մը չունինք, այդ ալ ... չըջան մըն էր որ անցաւ առանց նոյն իսկ հիւլէի մը չափ օգուտ ունենալու հանրութեան : Այդ անտեղի հեզնանքները օղին մէջ չըջմուլիկ

հուրերու պէս չատ չուտ մարեցան, քանի որ հեռու էին մասամբ մը իրաւախօսութենէ : Ըստ իս փոխանակ այդպէս ժամավաճառ ըլլալու անտեղի վէճերով, լաւ է՞ր ըլլար՝ այդ յարգելի յօդուածագիրներն ալ եթէ տարբեր իմաստով չի մեկնէին իրենց մտածումները, և իրենք ալ ոյժ տային որ չափ մը դրուի գոնէ ալքոլին (խօսքս խմաններու վերապահելով լոկ) եթէ անկարելի է լիովին վերցնել զայն աշխարհէն :

* * *

Գրականութիւնը ըսելով հրաշակերտներ չէ որ կը փնտռենք, այլ այնպիսի նիւթեր՝ որոնք օրուան պէտք մը դարձած են մեր համայնքին համար, և առանց որոնց անուս դասակարգը ինչպէ՞ս պիտի կրնայ լի ու լի և կատարեալ գոհացում տալ իր ընթերցասէրի ճաշակին, որուն մէջ չատ ու չատ բարոյական կը փնտռէ ամէն ոք : Մէկ խօսքով ըսել կուզեմ թէ չունինք այնպիսի հանդէսներ՝ զորս կարենանք համարձակօրէն ամէն դասակարգի ներկայել, վասն զի թերթեր իրենց ուժքովը միշտ այն հիմերու վրայ լոկ կուզեն հաստատել, ուր ասկէ տաւանակ մը տարիներ յառաջ այդ ուղղութիւնը պէտք էր լոկ :

* * *

Կրթական խնդիրները մեր մտածման առարկայ ընելը մասամբ զանցառութիւնով կուզենք ամէն տեղ մէջ տեղ նետել. որովհետեւ (բացառութիւնները յարգելով) տեղ տեղ աս ու ան թաղական աղային քմահաճոյքին կը ծառայուի լոկ, վարժապետ մը՝ որ չիտկէ չիտակ ուղղագրութիւն չունի, զայն տնօրէն-դասատու կարգած են խեղճ վարժարանի մը (այլովս տեսած եմ ներկայ ցաւալի վիճակը) պատճառը, որովհետեւ կարծեցեալ հոգաբարձուն՝ որ ինքնաշառահառութեան արտոյեան մըն է ինքնին, այդ դասատուին (ամուսնութեան) կնքհայրն է եղեր :

* * *

Եւ դեռ ինչե՞ր ինչե՞ր, զարգացում ըսուածը ճշմարտը խօսելով կը պակսի մեր ժողովուրդէն մեծաւ մասամբ, նոյն իսկ անոնք որ քիչ չատ դպրոցի երես տեսած են ու մպէտ բան մը կը նկատեն թերթերու հեռ

ստամուտ ըլլալը, և աւելի կը նախընտրեն նաւարը ու թղթախաղը ընթերցասիրութենէ (անշուշտ պարապ ժամերուն): Կան նաեւ այնպիսիներ որոնք աւելորդ ծախք մը կը նկատեն թերթի մը տրուած բաժնեգինը, (սոսկ մէկ քանի մէծիւն անգամ) և զեռ հաւակնութիւնը կուսենանք թէ. — մենք յառաջացումի հակայաքայլ միտում ունինք, որով կը կտրենք այդ սուղ ճամբան — չարաչար կը սխալինք: Թերթերը ժողովուրդի մը բարոյականը կը կազմակերպեն, և չէ թէ մենք չափաւորութիւնով խնայելու ենք մեր շննջին զոհողութիւնը՝ հանդէպ անոնց, որոնք իրենց իրր իւղապին օրհնեալ մամուլայի պէտք ունին:

* * *

Ոչ ոք իրաւունք ունի աս ու ան գրողը դատաւարտելու՝ հեղինակին անձը մէջանդ բերելով, այլ գրուածքը պէտք է ընդունիլ: Նոյն իսկ ամէնէն զուարթարար զաւելտազիրն անգամ բարոյական կը քարոզէ գրականութեան բեմին վրայէն, ինչպէս որ վարդապետ մը ունկնդրելու պարտաւոր ենք բեմին վրայ տեղացած թունդ շեշտերուն, առանց կարենալ խառնուելու իրաւունքով, մի եւ նոյն համեմատութիւնով պէտք է ունկնդրենք բոլոր գրուած քրոնիկ կամ այլ ինչ, ինչ որ ալ ըլլայ, մենք մեղի վճիռ չի տանք, այլ այդ նիւթը անկողմնակալ ոգիով մը քննենք, հասկնանք, հաստատենք և ըստ այնմ վճիռ տանք:

Հակառակ պարագային գրականութիւն չենք կրնար ունենալ, որ առողջ գրականութիւն կարենանք յորջորջել, որովհետեւ խմբագիրները մասնագէտներ են, անոնք ումպէտ նիւթերը ծովը կը զրկեն և անոնք միայն կը հրատարակեն՝ որոնք ո եւ է արժանիք մը ունին:

Ամօթ, նոյն իսկ խղճի դէմ բան է ձրի թերթ կարդալ, որովհետեւ ամէն բան իւր վարձատրութիւնը կուզէ, այսպիսի մեղադրելի է այն բաժնետիրը որ ժամանակին չի զրկեր իւր բաժնեգինը, ու աներեսաբար ըսի-ըսաւներով կղբաղիցնէ թերթերու վարիչները, որոնք չատ ու չատ զբաղում և մտածելիք նիւթեր ունին:

ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԷՉԷՐԱՆ

ԻԶՄԻՐԵԱՆ ԹՂԹԱՆՅՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Ահա մէկը եւս Իզմիրեան գրական դպրոցին այն հին ներկայացուցիչներէն, որոնց գրական գործունէութեանց անտեղեակ են նոր սերունդէն չատեր, և որոնց ստորագրութեան հաղիւ տարին անգամ մը կը պատահի, այն ալ գրական ո եւ է հանդէսի մը ամանորի բացառիկ թւոյն համար գրուած:

Գրիգոր Զիլինկիրեան քանի մը տարիէ ի վեր այս վերջին պարագան ալ կը զլանայ կոր մենէ, իր փաստարանական աշխատութեանց առատութեանը պատճառաւ:

Իզմիրեան չաբաթաթերթին 1904ի Կաղանդի բացառիկ թւոյն մէջ ուղբացեալ Մաթէոս Մամուրեանի մահուան տարեդարձին առթիւ անոր յիշատակին նուիրած իր այնքան գեղեցիկ ու սրտայոյզ յօդուածը, կարծես սահմանուած պիտի մնայ իր կարապի վերջին երգն ըլլալու, տխուր ու սրտաբեկ պարագայ մը, որու իրականութեան — չենք սպասեր սակայն — անոր համար որ իրմէ կալկակալենք դեռ չատ մը գրական հմտալից աշխատասիրութիւններ, որոնց հրատարակութիւնը այնքան կարօտագին կերպով պիտի ողջունենք:

Երեւակայեցէք լայն ճակատ մը, որմէ բաւական վեր դէպի գանկին կեդրոնէն անդին երթալու է, գորչագոյն մաղերու ցանցաւ շրջագիծ մը տեսնելու համար, թաւ յոնքերու ետեւ ապաստանած փափուկ աչքեր, որոնց մէջ ծիծաղկոտ ակնարկներ կը պնդտան միշտ, և շրթունքին վերեւ պիտի բուռ միմեաքիւռ մայրաւուա մը յորդ աղպըղպէղ, ու ակօսուած ճակատ մը յոգնավատ տակ աշխատութիւններու տակ ընկճուն: Ահա մէկ փոքր սիւրէթը Գրիգոր Զիլինկիրեանի, նախկին խմբագրապետը Իզմիրեան անդրանիկ «Ծաղիկ» չաբաթաթերթին:

Զիլինկիրեան բնիկ Իզմիրցի աղնուական ընտանիքի մը չարաւիգէն է: Իր ուսումը ստացած է Իզմիրի Աղգ. Մեսրոպեան վարժարանին մէջ իր ժամանակակից ընկերներն. Ոսկանի, Մամուրեանի, Կոստանդեանի հետ: Վարժարանին չրջանը լմնցունելէն ետք նետ-

ուած է առեւտրական աշխարհին յորձանքին մէջ: Բայց լրագրական ասպարէզին համար իր կանուխէն ցոյց տուած հակումը այնքան զօրաւոր ըլլալուն, իր առեւտրական զբաղումներուն մէջ իսկ առիթ գտնելով կը սկսի բաւական յաջող յօդուածներ հրատարակել, նոյն միջոցներուն հրատարակուող Պալթա-զարեանի «Արշալոյս»-ին մէջ:

1880ի միջոցներուն Չիլինկիրեան մտածումը կուեննայ հիմնել ու հրատարակել իգմիրեան անդրանիկ «Ծաղիկ» շաբաթաթերթը, օժանդակ-աշխատակից ունենալով՝ իր զըպրօցական ընկերներն, Ստեփան Ոսկանը, Մաթէոս Մամուրեանը, Գալուստ Կոստանդեանը, Միրզա Մսերեանը եւայլն: Այսպէս երեք տարի մը իր խմբագրապետութեան ներքեւ թերթը կանոնաւորապէս կը հրատարակուի հինգշաբթիէ հինգշաբթի, կէս գրական ու կէս քաղաքական բովանդակութեամբ: 1885ի սկիզբները թերթին նիւթական գոհողութիւններուն չի կրնալով դիմադրել՝ կատարուի դադրեցունել «Ծաղիկ»-ի հրատարակութիւնը, ու կընդգրկէ փաստաբանական ասպարէզը: Այդ թուականներուն է որ Մամուրեան տըպօրանին հրատարակութեան կուտայ իր տնտեսեակ մը թարգմանած վէպերը, որոնք այնքան մեծ ընդունելութեան կարժանանան ժողովրդեան ամէն խաւերուն մէջ:

Հիմակ որ, հակառակ այնքան տարիներէ ի վեր լրագրական ասպարէզին քաշուելուն, Չիլինկիրեան կը սիրէ միշտ հետեւիլ օրուան գրականութեան ամէն մէկ երեւոյթին: Պուրնովայի իր շքեղ բնակարանը մինչեւ ցարդ ժամադրաւային եղած է գրողէտ գոսակաւորին, ուր այդ գուարթ հաւաքոյթներուն մէջ կարժէ ժամերով մտիկ ընել, իր այնքան գեղեցիկ այնքան գուարճալի տնէքթոսները իր խմբագրական կեանքէն, որոնցմէ ամէնէն համովը ամէնէն սրամիտը կարժէ որ պատմեմ:

— «Այն միջոցին — կը պատմէ Չիլինկիրեան — երբ «Ծաղիկ»-ս կը հրատարակուէր Տէտէեան եղբարց տպարանին մէջ լուսահողի Տիգրան Տէտէեանին հետ գփտութիւն մը ունեցանք խնդրոյ մը առթիւ, ու հեռացայ տպարանէն մէկ մալ հոն ոտք չի կոխելու որոշմամբ: Քանի մը բարեկամներու խորհուր-

դով՝ մտածեցի սանկ թերթս հրատարակելու չափ տպարան մը կազմել, ու սենեակ մը վարձեցի Չուքուր խանին մէջ, որ թէ ինծի կը բաւեր և թէ մէկ ... գրաշարին: Սենեակ գտնելը դիւրին էր, բայց ինչպէս գտնել պէտք էր տպարանի կազմուածք մը անկուսի: Վերջապէս չեղարեմ. ասկէ անկէ Գրիտոսի դարէն մնացած հին ու կոտրած տառեր գտայ, ու ողորմած հոգի Պալթազարեանին մէկ մամուլը և ուրիշ կազմուածքները փոխ ուզելով՝ պատրաստուեցայ թերթս հրատարակել, որ երկու շաբաթէ ի վեր չէր հրատարակուած Տէտէեան տպարանէն հեռանալուն պատճառաւ:

— «Կը փոխաքիմ թերթս ժամ մը առաջ հրապարակ հանել անպատճառ, բայց եկու տես որ, չար բաղդէս՝ տպարան լաւնախին մէջ ամէնը միմիայն 47 հատ փ տառեր կար: Ահ անիծեալ փ.ը որ կեանքս քանի մը տարի կարճեցուց: Վերջապէս ճարահատ սկսայ թերթս հրատարակել, սակայն միշտ խրտչելով այդ նալիք փ.էն, աշխատելով որ այդ տառը ընաւ չի գործածուի թերթիս մէջ: Ամէն տեղամ ստացած յօդուածներուն մէջ եթէ չորսէն աւելի փ տեռնէի, անմիջապէս պատառ պատառ կընէի: Շատ անգամներ կը պատահէր որ մոռացմամբ քանի մը տառնեակ փ.ով լեցուն յօդուած կը յանձնէի գրաշարիս — ախի մարդ մը — որ հաղիւ թէ յօդուածիս կէսը չարած, իր ճաթած ձայնովը անկիւնին կը պօռար:

— Փիւր պիքսի ...

Ու զգալով գործած սխալս՝ կընէի ծայրէ ի ծայր կը փոխէի փ պաշունակող տողերը:

— «Օր մը չեմ յիշեր ինչ պարագաներու տակ, ինքզինքս նախկին տպարանս կարծելով Ախրիկէի վրայ երկարապատում առաջնորդող յօդուած մը գրելով՝ գրաշարիս յանձնեմ ու տպարանէն մեկնեմ եւ, հետեւեալ օրն ալ ճիշդ կէս օրին թերթս հրապարակ պիտի ելնէր: Առտուն կանուխ տպարան գացի, ու նայեցայ որ գրաշարս տնկիւնը նստած քիթը խառնելու զբաղած է:

«Զարմանայի բան, մտածեցի գրասեղանիս առջեւ անցնելով, այս ի՞նչ շուտ շարեր լմնացեր է:

— Յակոբ աղա ձայնեցի, սա յօդուածիս

փորձերը բեր նայիմ տէ ֆորմաները մեքենան
դնես :

— Ի՞նչ յօդուածի փորձ, ըսաւ ծուռ
ծուռ երեսս նայելով :

— Սա երէկ իրիկուան տուածա :

— Դեռ չի չարեցի :

— Ի՞նչ, ըսի թարկութեամբ ոտք ելնելով :

— Ան պիւքիւն փիւրները պապայիս տու-
նէն չի պիտի բերէ՞ր եւ :

« Ձեռքս ճակտիս տարի, հասկցած էի
գործած սխալս : Բայց անոնալու ժամանակ
չի կար, պէտք էի թերթը կէս օրին անպատ-
ճառ հրապարակ հանել, ապա թէ աչ ան-
պատուութիւնը մեծ է, քանի որ իզմիրի
բաժանորդներուս մէկ մասը սկսած էր դժ-
գոհանք յայտնել, թերթս ժամանակին հրա-
պարակ չի հանելուս համար : Սկսայ խորունկ
խորունկ մտածել այս անել կացութեան մէ-
ջէն երեսի ջուրով դուրս ելնելու համար :

« Յանկար՝ մտքիս մէջ գաղափար մը ծը-
նեցաւ ու անմիջապէս գրաշարին դառնալով՝

— Յակոբ աղա, ըսի, բոլոր փիւրերը ք-ի
փոխէ, ու շուտ մը չարելով ֆորմաները մե-
քենան դիր :

Եւ ճիշդ կէս օրին թերթս հրապարակ
կընէր Ափրիկէին բոլոր փիւրները բէնի փոխ-
ուած :

Իրիկունը հազիւ թէ քաֆէ տը Բառիէն
նկրս մտայ, բաժանորդներէս տաս տասներ-
կու հոգի մեկտեղ վրաս խոսեցային, կռահեցի
ընկիւնին, բայց աշխատիլ պէտք էր լնք-
զինքս ձեռք չի ապու համար :

— Ձրկնիկրեան էֆէնտի ըսաւ մէջերնէն
մէկը քմիծաղով մը, այսօր Ափրիկէն քով
գրելու նոր սղջագրութիւնը ձեզմէ սովորած
ըլլա նուա համար շատ երախտապարտ ենք :

— Ի՞նչ գիտցաք հազա, ըսի, առանց
շուարկելու, հռչակաւոր ու անուանի հայե-
րէնազէտը, այս ինչը անցած անբոմ Ափրի-
կէն քով գրած էր, միթէ մենք անկէ ա-
ւելի շատ բան գիտենք :

Մարդուկները իրարու երես նայելով հե-
ռացան քովէս, հապի պէս կլլելով նետած
այս որամիտ մարքավալս, առանց գիտնալու
թէ՝

— Փիւր պիքսի . . . » :

ՄԱՍԻՔՈՐ

ՔԵՐՈՎԲԻԿ ԱՂԱՆ

ԵՒ

ԻՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

... Բաղաքին արեւելեան կողմը հսկայ
կամարաշէն քարուկիր խանի մը սենեակնե-
րէն միոյն մէջ, գաւառի խոր անկիւններէն
գաղթող մարդուկ մը կը բնակէր, ուր տար-
ուէ տարի դրամներու հսկայ կոյտ մը դիզե-
լու կերպը լաւ մը սերտած լինելով, երբեք
չէր ուզեր բաժնուիլ այդ կեանքէն :

Դեռ տղայ՝ հազիւ Յճնոց, արդէն բաւա-
կան կլորիկ գումար մը ըրած էր իր անսիրտ
ու վաշխառութեամբ, որու ընկերակից ու-
նէր անընտան օժանդակ իւր ժլատ ու կծծի
չար բնաւորութիւնները :

Քերովբիկ աղան սեղանաւորական դա-
սուն երեւելիներէն, ամբողջ օրը իր սիրա-
կան սեղանին առջեւէն չէր ուզեր բաժնուիլ,
միշտ հսկայ տուժարներուն արձանագրու-
թիւնները, օր-հաշիւը իր աչքին առջեւէն
չը հեռացնելու համար, իր ամբողջ իտէալն
եղած էր՝ հարուստ ըլլալ, ԴՐԱՄ ԴԻՋԵՆ,
քանի որ մարդկութիւնը, խելացութիւնը,
կը կայանար միշտ դրամի վրայ :

Գիշերները դարձեալ միշտ նոյն սենեակը
կը պառկէր ու իբր գիշերուան ժամանցի բա-
ժին՝ ունէր իր կլկակը և քսաննոց գլանիկ-
ները, որոնք իր կեանքին կենսատու բարե-
բարներն եղած էին, սահմանուած փրկելու
զինք մեղամաղձոտութենէ և սոստա-
նայի չար սահմաններէ :

Իւր սեղանաւորական սենեակի գործառ-
նութեանց համար առջի առթիւ թէպէտ և
մէկ պաշտօնեայ մը առած էր, երեք-չորս
ոսկի ամսականաւ, բայց օրըստօրէական գոր-
ծառնութեանց բեղմնաւորութիւնը հարկադ-
րեցին Քերովբիկ աղան որպէս զի պզտիկ
աշկերտ մ'ալ առնու երթեւեկի գործերը կա-
տարելու համար :

Ու նոյն տարուան թաղային վարժարա-
նէն չըջանաւարտ վկայեալ տղայ մը՝ Արամ,
կըր գունտ այտերով, գիրուկ, յոյզ ձեռքե-
րով սեւ աչքերով, գեղեցիկ տղայ մը դեռ
հազիւ 14 դարունները թեւակոխած, երկու-

չաբթի օրով մը առաւօտուն կը ներկայանար մօրը հետ Գերովբէի աղային, իբրեւ թեկնածու այդ պաշտօնին:

Մայրը, որ չզլացաւ ամէն գովեստներ շռայլել իւր սիրելի Արամիկին հասցէին, որոնցմով հասկցնել կուզեր թէ, Արամ՝ իւր սիրելի գաւակը, գիտեր թուրքերէն, ֆրանսերէն, հայերէն և քիչ մ'ալ անգղիերէն, որոնք ուսած էր թաղին վարժարանէն, անկից ալ շրջանաւարտի վկայական առնելով:

Գերովբէի աղան խորասոյգ կը գիտէր պիչ պիչ հայելով մէյ մը Արամին և մէյ մ'ալ մօրը, որու գեղեցկութիւնը բաւական սիրտը տարուբերած էր մեր խեղճ ու վաւաչոտ ամուրիին, որու կեանքը եղած էր միակ խանի մ'անկիւնը դրամ զիւղել, ապրւել:

Չը գիտցուիր սակայն թէ՛ ի՞նչ պատճառներէ յառաջ եկաւ տարիներու ծանրածանր երկարապատում շրջանին մէջ խանին մէկ անկիւնը քօսացած, ժլատ, կծծի մը կեանքին՝ ապրելակերպին օրէ օր տարօրինակ բարեփոխումը, ճիշդ անցեալին հակապատկերը ներկայելով:

Արդեօք Արամին դիւթիչ ու հրապուրիչ տեսքն էր ոչ այս բիւ ու վաւաչոտ ամուրիին վրայ ներգործած էր, որ բոլորովին շռայլօրէն կուտար իւր պղտիկ այս ծառային դրամներ, և ամէն տեսակ առանձնաշնորհումներ իւր գործառնութեանց մէջ, և կամ թէ անպատճառ Արամիկի ընտանեկան պարագաներն էին այս բարեփոխման պատճառ, քանի որ յաճախակի կերակուրի կը հրաւիրէին զինք, իրենց գաւակին երջանկութիւնը պաշտպանող այդ ոգին:

Շաբաթը 1-2 գիշերներ մեր քառասուննոց խեղճը ուղղակի շունջը կ'առնէր հոն՝ իւր սիրական ու աչքբաց աչկերտին տունը, որու մասին երբէք գէշ չէր խօսեր, խօստանալով միշտ ձեռնտու գտնուիլ ապագային, հո՛ն, ընտանիքին ծոցին մէջ, խանին բուսավայրէններէն հեռու, շրջապատած եւայի քծնող, պչրող, չաքածը, չէլավճը, թռնուհիներէն, մարդուկը ինքզինքը երջանիկ, և երջանիկներու ամէնէն գերազանցը կը համարէր, բայց ինչ օգուտ որ այս կեանքը շարունակելի չէր, քանի որ վաղը գիշեր դարձեալ ստիպուած էր առանձնութեան մէջ խոկալ, յուսահատիլ

կեանքէն և աշխարհէն, ու այս մտածումներուն մէջ էր որ ալ եւս կուզեր ամուսնանալ ընտանեկան բոյն մը կազմելով երջանիկ ապրելու համար:

Մնասրածի նոր հով մը, տակաւ ոկսած էր մեր խանի մէկ անկիւնը պահապան եղող Գերովբէի աղային վրայ, որու այս արտառոց բարեփոխումէն բաներ մը չը կրնալով հասկնալ հետաքրքիրներու աշխարհը, (Մսակեցեալ, տես Հանրագիտակ թիւ 30, 1111). կարգ մը շուկացի բիւ վաւաչոտներ, վայրագ կրքերու գուրդ եղող սրիկաներ, իւր քով գտնուած աշկերտին հանդէպ ցոյց տուած սէրը ստէպ ի չարը կերեւակայէին, իսկ թաւին զրուակըն գաճալիները սանկ:

— Ի՞նչ պիտի ըլլայ քա՛, հէրիֆը անքահընա թաւմիչ կընէ կոր, Մաքրիլը ուտէ ուտէ շիշմիշ ըլլալ, համմէ՛:

— Ի՛նչ, բօթալը ըրաւ չըրաւ իր զըլխաւորը Պետրոս առաքեալին գիրկը խրկեց քի, հիմայ ինքն ալ ուզածին պէս ըրահաթ էօմիւր սիւրմիշ ընէ, բօթալը կիտի (արդեօք ի՞նչ բանով):

— Չը տեսա՞ր քա՛, քառսուն տարուան քօճա բաւանմիշ քրջօն աւանակներու պէս ամէն իրիկուն սկսաւ տուն դալ, կարծես թէ եէմիք կերթայ կոր, (արդեօք ճիշդ է) գուցէ:

Եւ չերկարենք, վերջապէս այս էր ամէն անոնց կարծիքը, որոնք ասոր անոր կեանքով կ'զբաւոյն, հոգ չէ թէ իրենց տան մէջ նոյն իսկ իրիկուն հացը պակտած լինի, հոգ չէ թէ իրենց թէնճիրէն միսէ զերծ ըլլայ, բաւական է որ քու միսդ, ուտելիքն հոյցը, և կամ ասոր անոր ապրելակերպը կայ, իրենք մ'այն կը գոհանան «ոչ հացիւ կեցցէ մօրդ՝ ալ և բօնիւ բամբասանքի»:

(Շարունակելի)

ՆՐՈՒԱՆԴ

ԱՐԵՒԵԼԲ

Օրաթերթ Աղդային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ 4. Պոստի համար 80 դրշ. գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանափողոց: ԱՐԵՒԵԼԲ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ՋԱՏԿԱԿԱՆ VISITE

ԿԱՐԾԵՍ ՊԱՐՏՔ ՎԻԶԻԴ

Երկու բաներ չապիկ ժողովուրդի կը քրտնցնեն գիտ, պոթերու պոթոնիքները ինչպէս նաև աւուր պատշաճի յօդուած գրելը:

Tiens !

Խանութներու ցուցափեղկերուն մէջ դիմակներ կը շարեն, յունական դաշնակը կսկսի գոռալ փողոցներու մէջ, անուշեղենները ի ցոյց կը դրուին և էրիկ կիկի իրար կը կղեն՝ առանց հրամանի պարահանդէս երթալուն համար, չաթականճի միսիւններ լուսթռն պոթերով շարաթ մը շարունակ ցատկէնուն հետեւանօք նասրնին կը խախտեն, ե՛ւ ... բարեկենսացու յօդուած մը կը թխենք: Թահն ... կը պօռան փողոցները, ճառը նինէն մօմօմօզ կը կախէ ցեղունէն, կինները իրար կուգան ու կը բամբասեն, հարսնցու օրիորդներ tout à fait chic Արեւազալի կը վազեն ծախուելու համար, լուրեան շատ ուտելէն ստամոքսի խանգարումներ յառաջ կուգան, և ահա ... մեծպահօցու յօդուած մը կերելի:

Օգերը տակաւ կը տաքնան, հաւերը կըսկըսին անել, կինները օր ընդ մէջ Բերա կելլան գնումներու համար, եկեղեցւոյ դանդակները կը ղողանջեն, նոր հարսերը իրենց քօռէնները բնաւ մէջքերուն չեն հաներ, ժամկոչները իրենց գօտիին մէջ պզտիկ առպրակ մը կը կարեն մանտրուք պալաթներու համար, քահանաներ գրպանին մէկ մէկ քալիքա գրած սուռնէ տուն կը պտըտին խօստովանանքի համար, այնքան ատեն չեն ունենար ճաշելու, եկեղեցւոյ պնակները կը մաշին մէթալիկներու չաթ չիթի չոթներէն, չէօրէկներու հօտը աշխարհք կը բռնէ փուռէն ելած տաք տաք, մինիսիկ մանչիկներ հօրերուն ձեռքէն բռնած Շթաշի Մայէոի խանութներէն սիւֆիւ կը մոնեն՝ սիւսիւ դուրս կելլան, տունները ծըք ծըք կը ծըքան, չախախտները կը վառըտըկին, օր առաջ բուռնայի տուփիկներ կը բացուին, վահանաձու-

կերը պոչ կը խաղցնեն, բաստըման ի հանդէս կուգայ, օղին կարծեօ չի կրնալով համբերել կալօններու մէջ՝ կը փրփրի, և ... Աւագ Շաբարցու յօդուած մը կը յօրինուի աւուր պատշաճի:

Եւ ահա ասոնց յաջորդող ԶԱՏԻԿը, և անոր աւուր պատշաճի յօդուածը, որ անպատճառ պէտքէ գրուի:

Առանց կեսուրի հարս կըլլայ, առանց չըջանաւարտ ըլլալու մարդ գրագէտ կըլլայ, առանց Ալփիարի Իզմիրի թերթը կը հրատարակուի, առանց անունդ առնելու Նիրուանային մօտենալ կարելի կըլլայ, առանց տուն օրհնենքի քահանան գրպանը մէճիս մը կրնայ նետել, առանց բուռնայի հաղարէն մէջ մը օրիորդի մը կրնայ մարդ պատահիլ, զօքանչը չը սիրող փեսայ ... Է՛հ պէլքի կը գտնուի, առանց մազերը երկարելու մարդ գրագէտ կըլլայ, առանց միւլքը մտնալու մարդ լացի գիշեր եկեղեցի կրնայ երթալ, առանց պոթերուն կօճակները դնելու շիֆ օրիորդներու մարդ կրնայ պատահիլ, առանց Ալիքսանեանի Մնակեան կը շարունակէ իր ներկայացումները, առանց լաժնիքին դանձելու Հանրագիտակ կը հրատարակուի կանոնաւորապէս, առանց Մերուժան Պարսամեանը ճանչնալու մարդս բանաստեղծ կարելի է որ ըլլայ, առանց Երանարութեան կըլլայ որ մարդս տոնաննայ, առանց գիշեր մը Բերա մնալու կրնայ ըլլալ որ մարդ լաժբասուի, առանց չեմեի ոսկոր կոտրելու կան ատամնաբոյժեր որոնք կըռըլ ակուայ կը քաշեն, առանց միս ուտելու նոր հարս մը կրնայ ապրուիլ, առանց սիրէկ մը օլտուն զրամօժիտ առնելու ամուսնութիւններ տեղի ունեցած են, առանց Պէրպէրեան վարժարան երթալու կրնայ ըլլալ որ մարդ ինքզինքը անոր սանը հռչակէ, առանց Սմբատ Բէսէճեանին կը պատահի որ մարդ յաջողի ո՛ր եւ է հանդէսի նուագածուած խումբ մը:

կազմել, առանց Հեկեի օր մը կըլլայ որ Հիւանդանոցը նուազահանդէս մը տայ, առանց ջութակ զիտնալու գեղարուեստական քրօնիկներ շատ անգամ ստորագրուած են, առանց դրօշակներ հինգնոց մը կրելու Սբաւնութի ցուցափեղկերուն առջեւ փռուողներ տեսնուած են, առանց մանկը մը տալու երէք տարի ձրի թերթ կարդացողներ կը գտնուին, առանց տասը փարայ տունը ծախք ընելու տուն փեսաներ տեսնուած են, բայց առանց Զատիկցու յօդուածի Զատիկ ... ահա ինչ որ ներքի չէ և չըլար ...

* * *

Ամէն տարի այս Մեծ տաղաւարին օրեր առաջ լրագիրներու եկեղեցական քրօնիկներու մէջ աչք յոգնեցնելու աստիճան ստուար անուններ մը կը կարդանք « փոխան այցելութեան » ի նուիրատուութիւնները, որոնք իրու թէ կը վճարուին, դրամը իր նպատակին կը հասնի, սակայն վճարողը իր նպատակին չի կրնար հասնիլ :

Շողեհաւանները, շողեհաւորները, կառքերը, թռամվայները կը հեծեն շնորհաւորներու բաղմութենէն, և պէտք է ըսել որ նոյն իսկ աստուծոն որ « փոխան այցելութեան » ի նուէր մը ըրած են Հիւանդանոցին, և սակայն սախային, պէքճիին և բաղնիքի ուստային հետ համահաւասար տունները կը պտըտկին :

Շնորհաւորներու վրայ գաղափար մը տալու համար հոս հատ մը իբր օրինակ կը դնենք, խնդրելով որ ուրիշներն ալ իբր այն նկատուին :

Խթման իրիկունն է :

Խառն ի խուռն ուտելիք և խմելիքներէն ծանրաբեռնեալ ստամոքսին ի հանգիստ՝ Սուքիաս աղան կռնակը բարձին, ժամացոյցին սլաքին կը նայէր որպէս զի ննջէ, մինչ տիկինը ահագին կոյժ մը տաք ջուր կը բերէ մօտը,

— Նա Սուքիաս աղա, ոտքերդ ջուրը դիր ...

— Ատ ինչ է, պօ՛յ նետեմ տէյի կուզես կոր ...

— Չէ ճանըմ, վաղը շնորհաւորի պտուիս նէ նոր բօթիւններդ նասըրդ չի ցաւ-

ցունեն տէյի ջուր բերի քի կակոզնայ տէ կտրես ...

— Էյ քեզի ո՛վ ըսաւ քի պիտի պտըտիմ տէյի ...

— Տէք ողորմայ, ատ ինչ լախըտը է...

— Բա կընիկ մէճիտիէ մը տուինք տէ կաղէթաները գրեցին նէ ինչ բանի համար էր ...

— Ան փարան կուտան տէ կը պտըտին կէնէ ...

— Պտըտիլ մը կայ ամա, խմելիքը էվէլ փախցունողներուն խելքն է քի կը պտըտի, ես սըկէ հունայ չեմ երթար ... նստիմ ընա՛նաթս պիտի նայիմ ...

— Սա նայէ, ինծի ինտո՛ր դող կը հանէ կոր ... քա ոտքերդ ջուրը դիր կըսեմ կոր...

— Կընիկ աս թապիյէթովդ վախնամ քի օր մըն ալ ոտքերս ջուրը չէ խողը պիտի դնես ... դաթը կընիկ չէք մի, զօռի կալերնուդ պէս, դող կելամ կոր մըն է կը դնէք, տահա չեղաւ նէ սուտ տեղը վրանիդ մարելիք կը բերէք, աչքերնուդ մէջի սեւերը խայիպ կընէք կըլլայ կերթայ, խօսքերդ կը քալեցունէք ...

— Զահէր բիւսրիւթինէ ըսողանի պէս կետնէն եմ բուսէր, պէտքը չէ՞ քի էթուաֆիս թառաֆիս վիզիթայի պտըտիս ...

— Վա՛խ փարաներս վա՛խ, ան ինտոր ալ աղուոր չիլ չիլ էիր, ըսելով խեղճ մարդը կը համակերպի, ոտքերը ջուրը կը դնէ, կոշտերը կը կտրէ, կը պառկի, հետուեալ օրը վիզիքի պտըտկելու համար :

Առաւօտուն կանուխ խեղճ մարդը կսկսի հագուել, պզտիկ սպու մը պէս լաւկան գէմք մը շինելով :

— Նա սա եախադ դիր ...

— Կը խխառնիմ կոր կընիկ, նեղ կուզայ կոր ...

— Աս պիտի դնես, նա սա ալ սէթրիդ է ...

— Կընիկ վրայիս նեղ է, կարերը չըթըռ չըթըռ կընեն կոր ...

— Աս պիտի հագնիս ...

— Նա բօթիւններդ ...

— Աման կընիկ, աչքերս դուրս կիյնան կոր ... նասըրրս ...

— Ատոնք պիտի հագնիս ...

— Մօ մէծիտիէ տուինք քի սգաւորի պէս
ցաւ քաշենք աչիք ...

— Հէրիք ըսես, դող կելամ կոր ...

— Վազ անցանք, մէծիտիէ մըն ալ հէ-
քիմին ճէրիմէ չի տանք ըսելով դուրս կել-
լայ մարդուկը ու կսկսի պտըտիլ:

Առաջին տունը գեղին մէջ:

— Քրիստոս յարեաւ ի մեռելոց ...

— Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի Սու-
քիաս աղա, մէյէր ակում օր ըլլայ քի երե-
սըդ տեսնանք ...

— Նասըլ էք նայինք, աս տարի քէօ-
միւրը փառը իտարէ ըրաւ ...

— Սուս եղիր սուս, իւթիւն իրաշ պըլ-
լուեցանք անանկ պառկեցանք քի տաքնանք
աչիք ...

— Մենք ալ պաշխա թիւուիւ տաքցանք,
մսնուս պէս էրիկ կընիկ կուիւի կեկայինք,
արուններնիս թէփէնիս կը ցատկեր, հայտէ
տաքութիւն մըն է վրանիս կուդար, անկէ
ետքը պիր պաշ կաթախ ...

— Էյ ցերեկները ի՞նչ կընէիր ...

— Աս սխաթէմը խանութը չրախներուն
հետ կընէի ...

Այս միջոցին իբրերը կը բերուի:

— Շատ տարիներու ...

— Շնորհակալ ենք ..., չէքէրէն չէ՞ք
առնէր ...

— Մեռսի ...

— Էյ տահա ի՞նչ կայ չիգայ, տիկին Մար-
նամը ի՞նչ կընէ կոր ...

— Ի՞նչ ընէ, տունի խըզմէթ, կարկը-
տուք ...

— Զօք չէյ, հալմաներն ալ չի տաքցաւ ...

— Աս տարի ասանկ կընաց ...

Երկու վայրկեան լռութիւն:

— Էհ մնաք բարով ...

— Աճէլէ կընէք կոր ...

— Տահա չատ տեղ ունիմ, գիտէք ես
ասանկ օր է ...

Ու կը մեկնի ուրիշ տուն մը այցելելու
համար, ու հազիւ դրանը մօտեցած թէ չէ,
ժամկոյը օծուած իւղը զէնպիլին մէջ կը
տնկուի:

— Բարեւ ժամկոյ աղբար ... կեցիր ես
մտնամ տէ դուն քիչ մը ետքը եկուր ...

— Գործ ունիմ աղաս, էյլիկ չեմ կընար
ըլլալ ...

— Բէք էյի՞ ...

Դուռը կը բացուի, ու մինչ Սուքիաս ա-
ղանիս կալօշները կը հանէ, ներսը վիճուկ
մըն է կեկայ ...

— Պէ ճանըմ, աս մարդիքը գործ չու-
նի՞ն ... պիր տիւղ միտփի՞ր պիտի խապու-
ընենք ...

— Քա ամօթ է ճանըմ, Սուքիաս աղան
է ...

— Որ խառնախախն ըլլայ նէ ըլլայ ...
հիչ մենք մեզի սանկ չպիտի նստինք ...

— Քա կիմանայ կոր, վեր կեկայ կոր ...

— Զէհէնէմին պուճախը թող երթայ ...

— Օ՛ ... հրամմեցէ՛ք Սուքիաս աղա ...

— Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Ասու-
ռած պէլան տայ անխելք կնուրսոց ...

— Ատ ի՞նչ լախըստը է Սուքիաս աղա ...
ներս հրամմեցէ՛ք ...

— Նափիլէ ինչ թաճիղութիւն տամ, ինչ
պիտի ըսենք նէ սանկ ոտքի վրայ ըսեմ տէ
երթամ, աս տարի քէօմիւրիւ սըխընթը քա-
շեցի՞ք ...

— Հապա՞, փառ ալ չունէինք ...

— Եկեղեցիներուն գանուեցա՞ք, անին-
չէնի թապախ հէ՞ ...

— Հա՞, սուս եղիր, իրաւ ես ... էյ
քիչ մը նստէիր ...

— Շագիկ իբրամ բեր ...

— Շնորհակալ եմ, բան մըն ալ չեմ ու-
զեր ... մնաք բարով, աղային բարեւներս,
ըսէք քի Սուքիասին մնար նէ կէճէլիլը
կունկեն չէր հաներ. ամա, ինչ ֆայտա քի
կընիլը սէպէպ եղաւ ...

Ու կը մեկնի, մինչ ներսը,

— Տեսար քա, բիւթիւն իմացիր է ըսած-
ներըդ, տիպը կեալինը պիլէ չի դբաւ ...

— Ան կիտեմ, եբէն պէրի մայտաըլ ունի-
ան է ... կըսէ սանֆասօն ամուսինը քմծի-
ծաղով մը:

Երբ ուրիշ տան մը ճամբան բռնելով կը
յառաջանար մեր Սուքիաս աղան, յանկարծ
դէմը կեկայ հեռաւոր արուարձանէ բարե-
կամ մը,

— Օ՛ ... Քրիստոս յարեաւ ի մեռելոց ...

— Օ՛ր ... օրհնեալ է յարութիւն Քրիստոսի ... Դ՛ւր ասանկ, կըսէ նորեկը ...

— Ես ալ հիմա ձեզի պիտի երթայի ...

— Էյ ես ալ ձեզի կերթամ կոր ամա ուշ մնացի տէյի ֆէսֆէսէ կընեմ կոր ...

— Էյ անանկ է նէ, սըտեղը լմնցունենք գործը ...: Նասըլ աս տարի փայտի քէօմիւրի թառաֆէ նասըլ էիք ...

— Սուս, սուս, շատ նեղութիւն քաշեցինք ... դճւք ...

— Մենք ալ անանկ ամա, մեր տիկինին թապլէթովը շատ փարայէն չեկանք, զօռի գալերնուս պէս կու՛մըն է կը հանէինք կոր, խըռս, տաքութիւն ըսելնիքէն, հայտէ եաթաշ ...

— Ես ալ հին գանաբէները սօսան նեւեցի ...

— Տահա ինչ կայ չիգայ ... եկեղեցի գաշի՛ր ...

— Հապա, հիչ չի փախցուցի ...

— Ես ալ անանկ ... էհ մնաք բարով ... սիկառ մը չէ՞ք հրամմէր ...

— Անանկ է նէ դուն ալ ինէ մէկ հատ մը չինէ, սէպէքի իրարու տուն գացինք, ախպար մէճիտիե՞ մըն ալ չիտամ նէ պարէ Հիւանգանոցին քի չի պտըտիմ տէյի ...

— Սուս մենք ալ ատանկ ըրինք ամա, մեզ նորէն դուրս նետեցին, նասըրիս տաք ջուր պիլէ հաղըր ըրին քի մահանայ չի դնեմ տէյի ...

— Մնաք բարով:

— Երթաք բարով:

* * *

Վերջապէս մեր Սուքիաս աղան, երեք օրերն ալ անգաստան պտըտելով, երեքշաբթի իրինկուն յոգնած դադրած տուն կիյնայ, ու առաջին գործը կըլլայ մատիտ մը առնելով՝ յուշատետրին մէկ ծայրը գրել հետեւեալ ցուցակը:

68 Գրխաոս յարեալ:

47 անգամ քէօմիւրի փայտի խօսուըռտուք:

34 անգամ եկեղեցիի, պնակի, քարոզի քոթիքի:

29 գաւաթ իքսիր:

34 շէքէր և չօքօլա:

8 ղգալ անուշ:

45 ղրշ. կառքի ծախք:

12 ղրշ. թռամվայի մասրաֆ:

9,75 ղրշ. շողենաւի ծախք:

10,50 ղրշ. պատրաստ սիկառ 4 տուփ:

20 չիֆթ պիշիմաղ խօսքեր:

16 չիֆթ քէննայի խօսքեր:

28 չիֆթ պարապ խօսքեր:

36 չիֆթ օդերու վրայ խօսքեր:

և և

140,000 ֆիւֆիւր կընիկ օլաճախիս, որ իր ինատովը թիւյ տնկեց օճախիս, հասրէթ քաշել տալով կէճէլիկի պուճախիս:

ԼԻԼԱ

ԿԵՍ-ՀԱՅՐԻԿԸ

ԱՅՐԻ ՏԿՆ. ՖԻԼՈՌ ՏԵԳՕԼԹԵԱՆ՝ որուն ամուսինը, քանի մը ամիս առաջ մեռած և փառաւոր յուզարկաւորութիւնով մը գերեզմաննոց առաջնորդուած է ...

ՊԵՏՐՈՍԻԿ՝ (7 տարու) սրամիտ տղայ մը, միակ դաւակը որ հանգուցեալը իր կնոջը պարգևած է:

ՏԻԱՐ ԱԶԳԸՐԱՅԵԱՆ (40 տարու) հանգուցելոյն միակ բարեկամը, որ իր բարեկամութեանը կեղծ չըլլալը ապացուցանելու համար, առանց քաշուելու, այրի տիկին ՏԵԳՕԼԹԵԱՆԻ՛ն կը յաճախէ զայն մխիթարելու պաշտօնով ... և սիկինն ալ հետզհետէ կը մխիթարուի ...:

ՏԿՆ. ՖԻԼՈՐ. — (Նստած է և թաշկինակի մը անկիւնը մարքա կը բանի, երկու անգրլասէ գիրեր են, մէկը՝ Ֆ — իր անունին սկզբնատառը — և միւս գիրը՝ Ա. — Աչքը բացեանին մականունին սկզբնատառը —, Պետրոսիկ մօտեցած է մօրը և ուշի ուշով մարքաներուն կը նայի):

ՊԵՏՐՈՍԻԿ. — Մայրի՛կ, ատ թաշկինակը որո՞ւնն է, գոյնը բէք աղուոր է ...

ՏԿՆ. ՖԻԼՈՐ. — Տղա՛ս, քեզի չվերաբերող գործի մի՛ խառնուիր, հալար անգամ ըսած եմ և նորէն զլուխդ չմտնար ...

ՊԵՏՐՈՍԻԿ. — (Առանց մօտիկ ընելու) մէկ

գիրը ֆ է, մէկն ալ Ա նայի՛մ (աւելի կը մօտենայ) այո՛ր Ա, մայրի՛կ Աը ու է ֆէն դուն ես ֆիլոս, Այրը ...

Տկն. Ֆիլոս. — Աը իշխէ Ա է ...

Պես. — (Կերթայ կը նստի և կսկսի ինքնիշխան մըմուտ) Ա՛յր, այսով ի՛նչ կը կապուի նայիմ, հա՛, Արուսեակ, Արաքսի, մեր դիմայի տունին կնիկը Արտէմ, հօրեղբորս տըղան Արթաքի ...

Տկն. Ֆիլ. — Ի՞նչ է, նորէն ինչ կը մըրմըռաս կոր ...

Պես. — (Առանց մօրը մօտիկ ընելու) Արտաշէս՝ դպրոցական ընկերս, Առնատու-գիւղ՝ անգամ մը գացինք չիլէնք կերանք ... այր ... այսով տահա ինչ կը կապուի հա՛ (քիչ մը բարձր) աւանա՛կ ...

Տկն. Ֆիլ. — Ծօ՛, որու ես աւանակը ...

Պես. — (Ոտքի ելլելով) Այրի՛ն ...

Տկն. Ֆիլ. — Մէյ մըն ալ էյէր աս խօսքը լսեմ նէ լեզուիդ թօփու կը խօթեմ հասկըցար անկիրթ ... հայրիկիդ աւանակ նէ՛ ... չլսեմ մէյ մնալ ...

Պես. — (Թեւերը ետին կը տանի և կուրծքը ցցելով) հայրիկիս մի՛ ... ես հայրիկիս չըսի ... ես այբին ըսի ...

Տկն. Ֆիլ. — Իշխէ այրը հայրիկդ է, քեզի տալը փարա կուտայ, քեզի խուզի մը առաւ, քեզի լօխում կը բերէ կոր ...

Պես. — Ըսել է ան մարդը հայրիկս է ...

Տիկ. Ֆիլ. — (Զեռքի գործին նայելով) այո՛ր ...

Պես. — Հայրիկս մեռաւ նէ, նորէն ողջընցաւ ...

Տկն. Ֆիլ. — Չէ տմա աս հայրիկը՝ ան հայրիկէն աղէկ է ...

(Պետրոսիկ առանց ձայն հանելու կերթայ և նորէն կը նստի ու կսկսի մտածել, իր փոքրիկ գանկին մէջ լուծել ջանալով ատ հանդուրկը, դանդը զանգակը կը հնչուի, տիկինը կերթայ բանալու և քիչ ետքը Աչքըբացեանի հետ սենեակ կուգայ)։

Աչքըբացեան. — (Չոյս կողմը կը նայի) Պետրոսիկը ո՛ւր է, օլլո՛ւմ, Պետրոսի՛կ ...

Տկն. Ֆիլ. — Նա՛ նստեր է, քեզի կըսպատէր կոր, ծօ՛ չելլաս երկու ժամ է հայրիկը չեկաւ, հայրիկը չեկաւ կըսէիր կոր, նայէ քեզի ինչ բերեր է ...

Պես. —

Աչքըբացեան. — Եկուր տղա՛ս ...

Տկն. Ֆիլ. — Հայտէ ելիր, ելի՛ր, հայրիկին ձեռքը պագ ...

Պես. — (Ոտքի կելլայ և սենեակին մէջ տեղը կուգայ) չպիտի պագնեմ իշտէ, հէ՛մ տանք ամէնքը իմին հայրիկիս խապար պիտի տամ (հանգուցեալ հօրը, պատէն կախուած լուսանկարին մօտը երթալով) հայրի՛կ, նայէ մայրիկս ուրիշ հայրիկ մը առաւ ինծի, ես չեմ ուզեր (ու կսկսի լալ)։

(Աչքըբացեան վայրկեան մը լուսանկարին կը նայի յետոյ աչքերը տղուն վրայ կը դարձնէ և մօտենալով համբոյր մը կը դրոշմէ ճակտին, ու արցունքոտ աչքերով առանց տիկինին նայելու սենեակէն դուրս կելլայ ու տունէն կը մեկնի ...)

Վ. ԳՐԵԳՈՐՅԱՆ

Մ Ա Հ

Դեռափքի կոկոնի մը՝ փոքրիկն Գառնիկի արսակեղեք մահուան դառնակսկիծ սուգին՝ զոր կողքան Հայրը՝ Ազգ. Ուսուցիչ Կարապետ Էֆ. Տ. Սեփանեան, ինչպէս նաեւ Նազարէք եւ Յարութիւն Էֆենտիկ Սյնեան, որոնց բեռնորդին եւ վաղամեռիկը, խաբարութիւնս ալ իր սգածեալ ցաւակցութիւնը կուգայ յայտնել։ Փոքրիկն Գառնիկ գառնուկի մը պէս գարնանամուտի զոհ մը եղած է ճաժանելի եւ անողոք հիւանդութեան մը։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Ս. Դաւթեան այս շարքու հրապարակ հանեց իր գասագիրքերու ստուար շարքին 56րդ հատորը, որ աշխարհիկ լեզուի ամէնէն կատարեալ և խնամեալ Բերականութիւնն է։

Գործը ձօնուած է Աշխարհաբարի Բերականութեան Հիմնադիր մեծանուն Սյաքունի յիշատակին։ Անոր գեղեցիկ Նախաբանը, ինչպէս և Գրագատականը հրատարակել առաջիկային վերապահելով՝ գործը կը յանձնարարենք հայ լեզուի ուսուցիչներուն։

ԳԻՆՆ Է 4 ԴԱՋԵԿԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՐՈՒՄԷԼԻ-ՀԻՍԱՐ. — Հոս Զատիկի առթիւ տեղի ունեցած զանազան և զարմանազան լուրերուն մէջ է՛ն նշանակելին է տեղւոյն քահանային վարդապետի հովեր առած, Հայր Սուրբի մը վայել երգեցողութեամբ զգեստներով պատարագ ընելը: (Կրօնական ժողովին ալ զրեցէք այս առթիւ. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Քահանան յանցանք չունի, Պատ. Թաղ. Խորհուրդը այդպէս տնօրիններ է: (Այդ մասին ալ Խառն ժողովին զիմեցէք. Ծ. Խ.):

ՍԿԻՏԱՐ. — Այս տարի հոս, Զատիկի շնորհաւորի պտըտողները երիտասարդ տունէն մեկնեցան և գթան մազերով ծերուկի մը երեւոյթով տուն դարցան... տիրող փոշիէն: (Երանի թէ այրերու տեղ կիներու վիճակէր շնորհաւորի պտոյտը, բուտուայի էքօծմին զգալի պիտի ըլլար. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Այս տարուան այցելութեանց է՛ն տաք խօսակցութիւնն էր, Ս. Կարապետ եկեղեցւոյն դպիրներու խապոտ երգեցողութիւնը, որ անտանելի ֆափօնի մը յառաջ կը բերէին: (Երբ միայն երմոդ էֆէնտիին վրայ ձգուի պաշտօնը ամբողջ Լեւոդ շաբուան երգեցողութիւնը, բնական է այդպէս պիտի ըլլայ, պէտք է գիտնալ որ կոկորդ ըսուածը կոամօֆօնի բլաք մը չէ. Ծ. Խ.):

ԳԱՏԸ-ԳԻՒԴ. — Մինչեւ հիմա գիտէինք որ աքլորները միայն կը ծծկուին, բայց, խթման երեկոյին հոս եկեղեցւոյն մէջ երկու բաջալը քաղութներ զիրար այնքան կծծեր են որ գլխարկ-

ներու ճոխ փետուրներ ժամկոչ աղբորը կողմէ ժողովուրդ իրենց տէրութուն յանձնուէր է: Այդ տեղի ժամկոչը գիտեմ անձնուէր է. Ծ. Խ.):

ԲԵՐՈՒ. Եկեղեցւոյ բակին մէջ, պատրաստ սիւսաւ ծրելու փորձեր ընող միւսիւններէն կը խնդրուի մէկ մէկ տարեկան Հանրապետական բաժանորդ գրուիլ զուարթ գաստանդութեան մը հետեւած ըլլալու համար, ինչպէս յիշած էր Արեւելի սրամիտ աշխատակիցը Գամեր:

ՄԱԴՐԻ-ԳԻՒԴ. — Կը հաւատեն թէ մէկ երկու շաբաթէ ի վեր հոս հասաւտուող ծիար Հովիւներէն մասին առաւօտեան թերթին երեքշաբթի օրուան թիւին դուռած «բամբասանքը» որուն մէջ յիշեալը ամուրի ներկայացուած էր, սխալ է բաձարցակապէս, յիշեալը ամուսնացած է փալամուտի) տարին և տէր է մտ կէս երկոտասան եակ զաւակներու:

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ Է.

ՉՈՒՏՈՂԸ Ո՞Վ Է...

Ձեօրէկը. ի՞նչ ալ աղւոր կ'ուտուի, կթէ բաւ պատրաստուած է, կթէ կըլ ալիւրը և եփուածքը մաքուր, ազնիւ և վարպետի ձեռքով եղած ըլլան:

Այդ վարպետութիւնը ահա պէտք է փնտռել համալուար անուշափաճաւ Մանուկ աղա էթմէքճեանի քով, որ, ինչպէս ամէն տարիներ, նոյնպէս այս տարի՝ Ս. Զատիկի առթիւ պատրաստած է հիանալի համով և հիանալի հոտով պատուական թարմ չէօրէքներ, իր պատուարժան յաճախորդներուն համար:

ՀԱՍՏԷ. — Գում-գարու, կայարանին դիմացը:

Ursoianstr ԱՐՄԷՆ ԼՈՒՐԵՐԵՐ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի բիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԵՐՆԵՐՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոչիս, Սուրբան Համալ, Թօփալեան իսան
Սոյն վաճառատունը, որ տարին երէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմով յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց թելոհիւններու
եւ տղայոց շիք եւ դիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրջ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—33



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղաչ պէյ իսանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆԻ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բաղմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, ևայլն. նաեւ անուններու սկզբնատառով գոհարադարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու զխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ շրջագգեռի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ճօնս. Նովման) ևայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և լն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանք տոկունութիւնը, նրբութիւնը և ամանութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք գիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՌՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—22